# Մոսկովյան տրիբունան քննարկում է Արցախի հարցը

**Վերջերս գործուղմամբ Մոսկվայում էր գտնվում «Արցախ» հայրենակցական միության վարչության եւ Հայաստանի ՌԱԿ-ի հիմնադիր խորհրդի անդամ Է. Մկրտումյանը: Մեր թղթակիցը դիմեց նրան մի քանի հարցով:**

**- Ի՞նչ կարող եք ասել Մոսկվայում տիրող ընդհանուր քաղաքական իրավիճակի մասին:**

- Այն չափազանց բարդ է: Ուժերի բեւեռացումը նոր թափ է ստացել: Մի կողմից, դեմոկրատները կուսակցվում են ելցինականների, մյուս կողմից՝ գորբաչովականների շուրջը: Վերջիններս Գորբաչովին դեռ «դեմոկրատ» են համարում եւ հավատ ունեն նրա նկատմամբ: Սակայն, իհարկե, քաղաքական Մոսկվան այժմ ապրում է նոր, միացյալ դեմոկրատական կուսակցություն ստեղծելու գաղափարով: Շատ դեմոկրատներ համարում են, որ նոր ստեղծվելիք կուսակցությունը (որի մասին հայտարարությամբ հանդես են եկել Շեւարդնաձեն, Սոբչակը, Յակովլեւը, Պոպովը եւ այլոք) կլինի խորհրդային երկրի ընտրյալների կուսակցություն, կարճ ասած՝ մի նոր ԽՄԿԿ:

**- Մեզ հայտնի է, որ հունիսի 29-ին տեղի ունեցավ Մոսկովյան տրիբունայի նիստը: Չէ՞ք կարող մի քանի մանրամասնություններ հաղորդել այդ մասին:**

- Այո, հունիսի 29-ին, շաբաթ օրը Մոսկվայի Հոկտեմբերյան շրջանի գործկոմի դահլիճում հավաքվեց Մոսկովյան տրիբունան:

Օրակարգի հիմնական հարցերն էին՝ երկրի քաղաքական ընդհանուր իրավիճակը եւ Միութենական պայմանագիրը: Զեկուցողն էր Լ. Բատկինը, իսկ համազեկուցողը՝ գրող, հրապարակախոս Ա. Նույկինը: Մեզ (ազատ լրագրող Կ. Մ. Ալեքսեեւսկին եւ ես) հաջողվեց ելույթ ունենալ Արցախի վիճակի մասին: Պետք է նշել, որ Բատկինի եւ Նույկինի զեկուցումներն ընդունվեցին մեծ ոգեւորությամբ: Նրանք կարողացան մեկնաբանել երկրում տիրող անհանդուրժելի իրավիճակը եւ համոզել լսողներին, որ այդ բոլորը կատարվում է երկրի նախագահի եւ նրա համախոհների վարած ոչ ճիշտ քաղաքականության պատճառով:

Բատկինը հայտարարեց, որ ինչպես խորհրդային զինվորի համազգեստ հագած եւ խորհրդային բանակի զենքեր կրող ազերի օմոնականն իրականացնում է հայերի բռնագաղթը եւ սպանությունները Ղարաբաղում, այնպես էլ Գորբաչովը, դեմոկրատի պատմուճան հագած, իրականում ճզմում է Ռուսաստանի դեմոկրատական շարժումը:

Տրիբունայում հանդես եկավ նաեւ Ելենա Բոնները: Նա հանգամանորեն քննադատեց Միութենական պայմանագրի այն կետերը, որոնք փաստորեն ժխտում են փոքր ժողովուրդների գոյությունն իրենց պատմական տարածքներում եւ նշեց, որ պայմանագրի ընդունումից հետո ոչ միայն կօրինականացվի արցախյան հայերի բռնագաղթը, այլ նաեւ երկրի տարբեր շրջաններում ապրող փոքրաթիվ ժողովուրդները կարժանանան նման ճակատագրի:

Արցախի իրավիճակի մասին զեկուցումով հանդես եկա ես: Մոսկովյան մտավորականությունը (դժբախտաբար միայն մտավորականությունը) լավատեղյակ է Արցախի դեպքերի ընթացքին. դրա համար պետք է շնորհակալ լինել «Ռուսական հեռուստատեսության», «Մոսկովյան արձագանք» հաղորդումներին եւ մի շարք ոչ պաշտոնական թերթերին: Արցախի հարցի վերաբերյալ կազմվեց հեռագիր, ուղղված երկրի նախագահին, այդ մասին արդեն հաղորդել են լրատվական միջոցները:

Հանդիպման ժամանակ ելույթ ունեցավ Յավլինսկին:

Նա նշեց, որ եթե յոթնյակում Գորբաչովը շեղվի իր ծրագրի կետերից, ապա արտասահմանը կհրաժարվի մեր երկրին ցույց տրվելիք բոլոր տիպի ֆինանսական օգնություններից:

**- Մոսկվայում էլ ի՞նչ կարեւոր միջոցառումների մասնակցեցիք:**

- Տրիբունայից հետո, մեզ հայտնի դարձավ, որ հուլիսի 4-ին տեղի կունենա դեմոկրատական Ռուսաստանի կոորդինացիոն խորհրդի նիստը, որտեղ եւս կարելի է մտցնել Արցախի վիճակի մասին հարցը:

Ճիշտ է, նիստի օրակարգն արդեն որոշված էր եւ մեր բարեկամներից շատերը համոզված չէին, թե կհաջողվի օրակարգը մեկ հարցով եւս մեծացնել, սակայն հույսներս չէինք կորցնում: Եւ ահա հուլիսի 3-ին վերջապես կարողացանք ստանալ Ե. Սեւաստիանովի եւ Մ. Շնեյդերի (նրանք Գ. Պոպովի օգնականներն են եւ միաժամանակ դեմոկրատական Ռուսաստանի առաջնորդները) համաձայնությունը:

Կոորդինացիոն խորհրդի նիստը տեղի ունեցավ հուլիսի 4-ին Մոսխորհրդի նիստերի դահլիճում: Մեր կողմից ներկա էինք Սեդա Վերմիշեւան, Ալեքսեեւսկին եւ ես: Որոշեցինք, որ կզեկուցի Ալեքսեեւսկին, քանի որ նա եւս վերջերս էր եղել Ստեփանակերտում: Խորհուրդը համաձայնեց մեր առաջարկին եւ Ալեքսեեւսկին հանդես եկավ զեկուցումով:

Հարցի քննարկմանը մասնակցեցին տասնյակ մարդիկ: Խորհուրդը միաձայն բանաձեւ ընդունեց՝ ուղղված պրեզիդենտական խորհրդին, միաժամանակ, որոշեց այն ուղարկել յոթնյակի հավաքին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, արտասահմանյան եւ խորհրդային լրատվական բոլոր կենտրոններին: ■